ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ.
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ 2023Թ

Ներկա վիճակի նկարագրություն

Ալավերդին բազմաբնակավայր համայնք է, որի կազմում ընդգրկված են 3 քաղաքային և 25 գյուղական բնակավայրեր: Ալավերդի համայնքի խոշոր բնակավայրերը ձևավորվել են հանքարդյունաբերության շուրջ: Ալավերդի քաղաքում պղնձաձուլական գործարանը աշխատել է ավելի քան 250 տարի: Թեև այն վերջին տարիներին դադարեցրել է գործունեությունը, սակայն մինչ օրս առկա է գործարանի արտանետումների բացասական /անխուսափելի/ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Այսօր էլ համայնքում գործում են հանքարդյունաբերական խոշոր ձեռնարկություններ՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն, որն իրականացնում է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքաքարի արդյունահանում ու վերամշակում, և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, որը շահագործում է Շամլուղի պղնձի հանքավայրը և զբաղվում հանքանյութի մշակմամբ: Այս ձեռնարկությունների շրջակա միջավայրի վրա ազդեցությունն արտահայտվում է մի քանի ուղղություններով, ինչպիսիք են տեխնոլոգիական ջրերի արտահոսքը, փոշու արտանետումներն օդային ավազան և վտանգավոր նյութերի արտահոսքը:

Համայնքի տարածքում է գտնվում նաև Ալավերդու լիցենզավորված աղբավայրը, որը ևս բացասական ազդեցություն ունի մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա:

Հանքավայրերի երկարամյա շահագործումը, խոշոր պոչամբարների, մկնդեղի թափոնների գերեզմանոցի և կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի առկայությունը, խոշոր բեռնատարների երթևեկությամբ ծանրաբեռնված համայնքի միջով անցնող միջպետական ավտոճանապարհը, տարածքի անտառների ժամանակին իրականացված հատումները համայնքի բնակչության առողջության և բնության վրա ունեն էական բացասական ազդեցություն:

Ծրագրի նկարագրությունը, նպատակները, խնդիրները, արդյունքները և իրականացման գործողությունները

Ալավերդի համայնքի այս ծրագրի շրջանակում ազդակիր համարվող բնակավայրերում առկա է ընդամենը մեկ փոքր բակային մարզահրապարակ և մեկ զբոսայգի, ինչը համայնքի բնակիչների գերակշիռ մեծամասնության սպորտով զբաղվելու և ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորություն և մատչելիություն չի ապահովում: Բնակիչները բազմիցս դիմել են համայնքապետարան՝ հարցի լուծման համար քայլեր ձեռնարկելու խնդրանքով: Ազդակիր բնակավայրերից մեկում համայնքի բնակիչների և համայնքապետարանի աշխատակիցների միասնական ջանքերով մաքրվել է բազմահարկ շենքերի հարակից տարածքներից մեկը, մասնակի բարեկարգվել է տարածքի տաղավարը, այստեղից հեռացվել են ապօրինի տեղադրված վագոն տնակները՝ ակնկալելով, որ հետագայում այստեղ բնակիչների սպորտային և լիարժեք հանգիստը կազմակերպելու համար հարմարավետ պայմաններ կապահովվեն: Համանման տարածքներ կան նաև ազդակիր մյուս բնակավայրերում, որոնց անբարեկարգ վիճակը բացասական ազդեցություն է ունենում նաև մթնոլորտային օդի մաքրության և պահպանման վրա:

Ներկայիս վիճակը շտկելու, մթնոլորտային օդը մաքուր պահելու, բնակիչների առողջության պահպանման, ամրապնդման, առողջ ապրելակերպի խթանման նպատակով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 6-րդ և 11-րդ ենթակետերի (մթնոլորտային օդի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ, բնակավայրերի կանաչ գոտիների պահպանման, վերականգնման, բարելավման միջոցառումներ, առողջ ապրելակերպի խթանում, վարքագծային գործոնների ձևավորում, առողջ ապրելակերպի ձևավորմանն ու խթանմանն ուղղված միջոցառումներ) համաձայն, համայնքը նախատեսում է 2024 թվականին ձեռք բերել նախագծանախահաշվային փաստաթղթեր և դրանց համաձայն իրականացնել մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցման աշխատանքներ: Աշխատանքներով հիմնականում նախատեսվում է նստարանների, աղբամանների տեղադրում, մարզահրապարակների, տարածքի լուսավորում էներգախնայող լուսատուներով և կանաչապատման աշխատանքներ:

Ալավերդու համայնքապետարանը կոմունալ ծառայության ՀՈԱԿ-ների միջոցով կապահովի այս տարածքների խնամքը և պահպանումը:

Ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի բնակչության կենսակերպի փոփոխմանը, ֆիզիկական կուլտուրայի դերի մեծացմանը, հանգստի անցկացման համար լիարժեք հնարավորության ստեղծմանը, ինչպես նաև դրական ազդեցություն կունենան շրջակա միջավայրի վրա:

Նպատակներ

- Առողջ ապրելակերպի խթանում
- Շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքար

Խնդիրներ

- Առողջ ապրելակերպի և վարքագծային գործոնների ձևավորում
- Մթնոլորտային օդի պահպանություն, օդի որակի բարելավում, աղտոտվածության նվազեցում

Գործողություններ

Ալավերդի համայնքի ազդակիր 3 բնակավայրերում՝ Ալավերդիում, Թեղուտում և Ախթալայում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում՝ տարածքի բարեկարգում, ծառերի տնկում, նստարանների և մարզասարքերի տեղադրում:

Արդյունքներ

- առողջ ապրելակերպի համար ստեղծված պայմաններ
- համայնքում սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար ֆիզիկական դաստիարակության ու ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու մատչելիություն
- մթնոլորտային օդում փոշու և մեքենաների արտանետումների արդյունքում օդի աղտոտվածության խտության նվազում
- բարեկարգ համայնքային միջավայր
- նպաստավոր և անվտանգ պայմաններ հանգստի և ժամանցի համար:

Ծրագրի շահառուները

Ծրագրի ուղղակի շահառուները համայնքի ազդակիր բնակավայրերի թվով 23071 բնակիչներն են, ովքեր ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ ապրելակերպ վարելու, մաքուր մթնոլորտային օդում լիարժեք հանգիստը կազմակերպելու հնարավորություն կունենան:

Ծրագրի իրականացման հիմքերը

Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024թ. ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքի, «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 27 փետրվարի 2014 թվականի N 197-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները ու «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն հաստատված և առաջիկա տարվա պետական բյուջեով նախատեսված ծրագրում համայնքի ավագանու կողմից առաջարկվող փոփոխությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 26 սեպտեմբերի 2002 թվականի N 1544-Ն որոշման և Տեղական ինքնակառավարման ՀՀ Օրենքի (Հոդված 12՝ Համայնքի պարտադիր խնդիրները) պահանջներին համապատասխան:

Ծրագրի իրականացման փուլերը (ժամանակացույցը)

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2024թ ընթացքում՝ փետրվարից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Փետրվար-մարտ ամիսներին նախատեսվում է գնման գործընթացի արդյունքում ձեռք բերել նախագծանախահաշվային փաստաթղթերը, ապրիլ-դեկտեմբերին՝ մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցման աշխատանքների գնում և իրականացում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսեր

Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 29001040 ՀՀ դրամ է, որը կիրականացվի ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարից: Մասնավորապես մարզահրապարակ/հանգստի գոտիների և այգիների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում՝ 850000 ՀՀ դրամ, մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցման աշխատանքներ (ներառյալ հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայություն)՝ 28151040 ՀՀ դրամ (նախնական նախահաշիվը կցվում է):

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Գումարը (հազար. դրամ)	Համամասնությունը %
1	Առողջապահություն	29,001.04	100
1.1.	Ալավերդի համայնքի Ալավերդի, Ախթալա և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում	28,151.04	97
1.2.	Նախագծա-նախահաշվային աշխատանքներ	850.00	3
	Ընդամենը	29,001.04	100

Ալավերդի համայնքի ղեկավար Ա.Թամազյան